Դ. ՏԱՐԻ　　　ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 10 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1901　　　ԹԻՒ 358

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Պուլկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 տոլ.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆՈՆՔ ՎՃԱՐԵԼԻ
Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ է. իսկ վերջին երեսի համար 20 սանթիմ է. երեքէն աւելի անգամներու համար 20 Օ|օ զեղչ կըլլայ։
Վառնայի համար ձեռք 10 սանթիմ

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին
—
Редакция на вѣстникъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjoum»
Varna (Bulgarie)
...
Դրութիւնք ետ չեն տրուիր
Արտասահմանի ձեռք
)(20 ՍԱՆԹԻՄ)(
Պուլկարիոյ համար ձեռք
⩙ 15 ՍԱՆԹԻՄ ⩙

ԼՈՒՍՆԵԱԿ ԳԻՇԵՐ

—◈—

Լուսնեակ գիշեր ծովափի մօտ լուռ մունջ,
Դիտեմ անյագ խորը անծայր եթերքին,
Մինչ ալեծուփ ծովը խառնէ իր մրմունջ
Տիեզերքի սխրանուագ հեշտ երգին։

Կապոյտ ալեակ հագած շողեր ոսկեհուռ,
Ցօր աներկիւղ կուիւ մղէ մահուէտ
Հոգ չէ եթէ սէպ ժայռին, դէմ ամրակուռ,
Փշրուի նա, խիզախ կռուող մըն է յաւէտ։

Եւ լուռ լուսին կախուած երկնից խորքէն վար,
Հուր կը սփռէ անհուն ոսկի կամարին
Մինչ վէտվէտուն ալեաց մէջը ոգեվար,
Անթիւ կայծեր տակաւ կայրին կը մարին։

Ու կը խորհիմ իմ հայրենիքի անոք,
Տանջանքներու, ցաւի վայրը հոն հեռուն,
Ուր պսպղայ լոյսով լուսին անողոք,
Տաքարիւնը մորթուած բիւր զոհերուն։

7 Հոկտ. Վառնա　　　ՎԷՏԱ.

ՎԱՌՆԱՅԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ ԵՒ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

Երկուշաբթի օրը Վառնայի երկսեռ հայ վարժարանները գոցվեցան, որովհետեւ ուսուցիչները միաձայն որոշած են եղել եթէ ռոճիկ չստանան իսկոյն կանգնեցնեն դասաւանդութիւնը։ Մենք մասնաւոր տեղեկութիւններով թէ ուսուցիչներից բացատրութիւն ստացանք եւ թէ դպրոցի նիւթական մատակարարողներից ու այդ ուսուցչական խումբը վարձողներից, որոնք կազմում են թաղականութիւնը։

Ուսուցիչները իրանց այդ քայլը արդարացնում են նախ նրանով, որ ամէնքն էլ ամբողջ ընտանիքներ են պահում իրենց ստացած ռոճիկներով, իրենց վարձված միջոցին խոստացվել է ամիսը լրանալուն պէս ռոճիկը վճարել, որ ուսուցիչը եթէ ամէն օր մտածէ իր եւ իր ընտանիքի օրական հացի համար մի քանի սանթիմ ճարելու վրա, նա երբէք չի կարող լաւ ուսուցիչ լինել։

Բացի այդ ուսուցիչները յայտարարում են, որ թաղականութիւնը իրենց վերաբերմամբ չարունակ մի տեսակ արհամարհոտ դիրք է բռնում, որը ամենից շատ ազդել է ուսուցչական խմբի վրա։

Ուստի ուսուցչական խումբը աւելի լաւ է համարում հրաժարվել, քան թէ այդ տեսակ պայմաններում, որոնք դաստիարակի ժամեր կտրում են, պաշտօն մարել։

Արդարացի է ուսուցիչների պահանջը, բայց նրանք մի քիչ շտապել են։

Արդարացի են եւ թաղականների պատճառաբանութիւնները, սակայն սրանք էլ միկէտում սըխալվում են, այն է որ թաղականութիւնը թէեւ պարտաւոր չէ իր գրպանից վճարել ուսուցիչներին, բայց պարտաւոր է օր առաջ դրամ գտնել ուսուցիչներին ժամանակին վճարելու համար։

Վառնայի հայ հասարակութիւնը շատ լաւ գիտէ որ ազգային դըպրոցները դրամ չունին, սակայն նա թաղականներին ընտրել է է որ դրանք վարեն իր հիմնարկութիւնները և նրանց բարեկարգ վիճակի մէջ պահելու միջոցները գտնեն։

Բարեբախտաբար ուսուցիչների և թաղական խորհուրդի մէջ համաձայնութիւն գոյացաւ դըպրոցները կրկին վերաբացվեցին երկու օր միայն փակ մնալուց յետոյ։

Այս մի լաւ դաս է Վառնայի հայ հասարակութեան համար։ Թող հասկանայ որ առանց դրամի կանոնաւոր դպրոց չի կարող բացվել և իր նիւթական աջակցութիւնը չը մերժէ։

ՎԱՐԴՕ

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

ՇԱՐԺՈՒՄԻ ԱՇԽԱՏԱԿՑԷՆ ՄԱՍՆԱՒՈՐ

Հեռագիրներ

«Սուլթանը շատ հիւանդ է». կը հեռագրուի.

«Ամենաապահով աղբիւրներէ քաղուած լուրերը կը հաստատեն թէ Սուլթանին երիկամունքի հիւանդութիւնը այն աստիճան յառաջացեր է որ անհնարին նկատուեր է բժշկական « եւ է գործողութիւն»։

Խռովութիւնք ի Ռուսիա.— «Պըէսլաւէր Ցայթունգ» Բեռլինէն կիմանայ թէ Ռուսիոյ շատ մը կէտերու վրայ արիւնալի բաղխումներ տեղի ունեցած են նօթի ամբոխին եւ զինուորներու միջեւ մանաւանդ Սարաթօվի մէջ մեծ արիւնայեղութիւն եղած են։

Ներքին գործերու Նախարարը Սըրալա գնաց. այս մասին ծարին հետ խորհրդարելու։

[illegible] ուսանողական խռովութիւնները մեծ համեմատութիւններ ստացած են։

«Անկցին բռնաւորները» գոչած են ուսանողները։

Բազմաթիւ մեռեալ եւ վիրաւորներ կան։

«Պէստըրալէց» յետադիմական թերթին խմբագիրը քարկոծուեցաւ ուսանողներէն։

Տակնուվրայութիւնները յարատեւելու վրայ է։

—«Միսս Էլէն Սթօնէի առեւանգումը. — "Տէյլի Թէլէկրաֆ» Պոլսէ կիմանայ թէ ամերիկացի միսիոնարուհի Միսս Էլէն Սթօնէն առեւանգող աւազակները ա՛լ չեն հալածուիր զինուորներու կողմէ։

—«Սուլթանին հիւանդութիւնը».— «Վիէնէր Ժուռնալ» Պոլսէն կիմանայ թէ հակառակ բոլոր հերքումներու. Սուլթանը անցած ամսուանէ ի վեր լուրջ կերպով կը տառապի երիկամունքի հիւանդութենէ: Անցած օգոստոսին Միւնիխցի բժիշկ մը եւ ուրիշ յոյն բժիշկ մը իրեն խորհուրդ տուին վիրաբուժական գործողութիւն մը կրելու բայց Սուլթանին անձնական բժիշկը, Էմին հակառակեցաւ, ըսելով թէ մորֆինի ներարկումները կը բաւեն։

Արդարեւ առջի բերան, այս ներարկումները մեծ օգուտներ առաջ բերին, բայց վերջին օրերս ցաւերը վերադարձան եւ Սուլթանը դարձեալ բժիշկներու դիմելով, ասոնք ասանկ պատասխանեցին թէ ալ շատ ուշ է վիրաբուժական գործողութեան մը համար։

Կարծիք կայ թէ քար գոյացեր է Սուլթանին երիկամունքներու մէջ։

— «Հայաստանի վիճակին մասին պրօշիւրներ». — «Բօյիթիշէ Քօրէսբօնտանս» Մոնէվէն եւ Բարիզէն կիմանայ թէ նոյն քաղաքներու մէջ երեւան ելածեն հայանպաստ պրօշիւրներ, որոնք սրտաճմլիկ կերպով կը նկարագրեն Հայաստանի աղիողորմ կացութիւնը, քրդերու եւ թուրք զինուորներու գործած խժդժութիւնները, յիշելով միանգամայն Զարին եւ Լամստորֆ ու Տէլքասէի արտաքին գործոց նախարարներու ղրկուած աղերսագրերը, Սուլթանը աւելի եւս պիտի կատղեցնեն եւ հայոց վիճակը աւելի պիտի վատթարանայ։

— «Ռուսիոյ խռովութիւնները».— «Տէյլի Թէլէկրաֆին» Սարաթոֆէն կիմանայ թէ արդարեւ կռիւը վերջին ծայր կատաղութեամբ տեղի ունեցած է ամբոխին եւ զինուորներու միջեւ։

Այս վերջինները իրենց ձիերուն ոտքերուն տակ բազմաթիւ անձեր կոխկռտած են եւ ապա կրակ պարպած են ամբոխին վրայ։

60 մեռեալ եւ հարիւրէ աւելի վիրաւորեալներ եղած են։

Կացութիւնը ծանր է ամբողջ Ռուսիոյ մէջ։

Գիւղերու մէջ գիւղացիները նօթի մեռնելու վրայ են։

Զարը երեք միլիոն ռուբլ. նուիրեց բայց այս գումարը հեռի է բաւելէ։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՕՐԷՆՍ, 2 Հոկտեմբեր

Երկար ժամանակ էր որ տեղւոյս գաղութը զրկուած էր յեղափոխական ժողովներէ, կարծես պահանջ մը դարձած էր առ, ուստ պահանջը չանտեսեց տեղւոյս Հ. Յ. Դաշ. Կոմիտէն և սեպտ. 29ին, յեղափոխական ժողով մը սարքեց։ Ժողովին փութացած էին ներկայ ըլլալ քիչ թէ շատ հեռաքրքրուող հանկցող հարիւրէ աւելի ունկնդիրներ հրաւիրուած էին խօսելու պ. Ա. Վռամեան և Ա. Լեւոնեան. ժողովը բացուեցաւ „Հերիք որդեակ“ երգը երգուելով, Ատենապետը, պրն. Ղ. Մարտիկեան քանի մը կտրուկ խօսքով ըսաւ թէ, „Հայաստանը այսօր ի՞նչ վիճակի մէջ

է և արտասահմանի հայերը ի՞նչ կընեն անոնց հանդէպ», ցոյց տուաւ թէ Հայաստանէն եկած աղեխարշ և սրտաճմլիկ ձայները, հոն տիրող հալածանքը ու թշուառութիւնը պահ մը թող սթափեցնեն արտասահմանի հայութիւնը և վերջացուց այսպէս. «անտարբերութիւնը կատարեալ ոճիր մըն է արտասահմանի հայութեան կողմէ հանդէպ հայրենիքէն մեզ հասնող ձայներուն», «սլաւական» երգէն վերջ հրաւիրուեցաւ պրն. Լեւոնեան որուն նիւթն էր «Ներկայ կացութիւնը». Պարոնը համոզիչ փաստերով ցոյց տուաւ թէ՝ «Թուրքը պիտի կոտորէ մինչեւ իր նպատակին հասնիլը—հայուն բնաջնջումը Հայաստանէն, այսօր ի՞նչ վիճակի մէջ է Սասունը մօտալուտ ջարդ մը այլեւս ենթադրութիւն մը չէ, և ինչ են Մուշի մէջ պատահածները, մինչեւ ե՞րբ պիտի սպասենք Թուրքը մեզ ջարդեց, կը ջարդէ ու պիտի ջարդէ եթէ չը զօրացնենք յեղափոխութիւնը, եթէ չը խորհինք այս բնաջնջումին առաջքը առնելու. Թուրքը ամենայն ապահովութեամբ կարող է իր նպատակին հասնիլ. ուստի պէտք չէ սպասել, ներկայ ճգնաժամին մէջ մէկ ճամբայ մը կայ միայն. այն է թէ մեր բոլոր ուժովը անխտիրօրէն պէտք է զօրացնել հայկական յեղափոխութիւնը. Ժողովուրդը իր համակրութիւնը ծափահարութիւններով յայտնեց։ Յետոյ հրաւիրուեցաւ [illegible] որուն նիւթն էր «Պէտք է միանալ» ու յարգելի ատենախօսը ամբողջ ժամ մը խօսելէ յետոյ ըսաւ միանան ոչ միայն կուսակցականներ այլ անոնք որոնք քիչ թէ շատ հաւատք ունին և որոնք կը հաւատան թէ բան մը կարող են ընել. ցոյց տուաւ թէ՝ մենք դիտումներ չունինք որ կուգաք մեզ լսելու, մենք իրողութիւնն է որ կուգանք հնչեցունելու ձեր ականջին, որպէսզի արթննաք ու սթափիք այս դառն անտարբերութենէն. բան մը որ երազ թուեցաւ ձեզի 1890 էն մինչեւ 94. 95ին մինչև.... պրն. Վռամեան լաւ ծանրացաւ թէ յեղափոխականնին և թէ անտարբերին վրայ. այս անգամ խօսածները աւելի մեծ ազդեցութիւն ներգործեցին ունկնդիրներու վրան թէ հոս խօսածները Ամերիկայի բոլոր հայաբնակ քաղաքներու մէջ խօսէր. չեմ ուզեր երկար գրել, որովհետեւ Հայրենիքի չահաւէտ էջերը շատ քիչ են. բայց միայն կը թելադրեմ պրն. Վռամեանին որ երբ ուրիշ տեղէ հրաւիրուի՝ միմիայն թող յիշէ Լօրէնսինը. Ժողովուրդը ամենայն պաշարիւնութեամբ և անչչուկ մինչեւ վերջը ունկնդրեց և բուռն ծափահարութեամբ մը համակրեցաւ պրն. Վռամեանին. Հիմի՞ էլ լռենք երգը երգուելով ժողովը փակուեցաւ և ժողովուրդը գոհ տպաւորութեան մը տակ մեկնեցաւ. կը յուսանք թէ այս ալ իր արդիւնքը պիտի ունենայ. սպասենք.

ԺՊՏԵԱՆ.

—o—

6 Հոկտեմբեր Կալաց

Կալացի ազգայնոց մէջ ժամանակէ մը ի վեր տիրող քահանայական խնդիրն՝ թէ տեղւոյս կառավարական շրջանին մէջը եւ թէ ամէնուրեք [illegible] պատճառեց ամէն զգայուն ազգայնոց։ Ցաւ է ըսել որ միայն մեր պատրիարքարանն չըսթափեցուց եւ ան խիստ անտարբեր կեցաւ, որոյ հետեւանքն եղաւ ժողովրդական բանակռիւներ, եւ արդար ու անիրաւ քայլերը։

Արդարեւ Ղեւոնդ քահանայ Փափազեանն խիստ պակասութիւններ ունեցող մէկն է, եւ այս գիտեն ամէն այն հայերը որոնց քով կենալու բաղդն ունեցեր է։ Ամէն կեցած տեղն իր արժանաւոր գրօշմն ընդունած է ճակատին վրայ տիրող հոգեւոր իշխանութենէն ու անանկ մեկնած է, գալով Կալացի ժողովուրդեան կողմէն սիրուելու հարցին, պատասխան՝ խիստ հեշտ է, Կալաց մուտ գործելէն մինչ՝ օրս՝ ամբողջ զգայուն դասակարգին եւ հասարակ ժողովուրդեան մեծամասնութեան զզուանքին արժանացած է, ու բարեկամ չէ ունեցած, վասնզի չէ ունեցած սիրուելու յատկութիւնն, եւ չէ տուած արդիւնք ժողովուրդեան, ըստ պահանջման իւր բարձր կոչմանն։

Մեր ներկայ նպատակէն դուրս է բացատրել սիրելի ընթերցողաց նորա վարմունքն ու անօրինակելի արարքը, թողլով զայդ աւելի բանիմաց անձանց։

Մեր իսկական նպատակն է միայն այն, որ պարտաւորած եմ հրապարակաւ գնել պատ. թերթիդ ընթերցողաց առջեւ թէ ի՞նչ է այսօրուայ Կալացի ժողովուրդեան երկու կուսակցութեան բաժնուելն եւ քահանայական խնդիրը իբրեւ գործիք ընել իւրեանց յաճոյակատարութեանց Ղեւոնդ քահանան եւ ոչ մի ուղող կայ այդ յայտնի ճշմարտութիւն մի է. վասնզի այն կուսակցութիւնն որ այսօր Ղեւոնդ քահանայի կը վերագրուի արդարութիւն չէ, որովհետեւ մինչ խորշելով խորշած է եւ այժմ իսկ կը խորշի նորա անունն լսելէ։ Հապա ի՞նչ կը մղէ ոմանց դատապարտելի մը պաշտպան հանդիսանալու։ Այն է, զոր աշխարհի անձեր կորոնեն իւրեանց բաղդախնդրութեան մէջը։

Քաղաքիս մէջ ժամանակէ մը ի վեր տեղի ունեցած բանակռիւներն քահանայ փոխուելի չը փոխուելի վրայ չէ, այլ անձնական կիրքէ զոր առաջ վարել կուզեն եւ մի միայն երկու անձինք են. մինն զմիւս յաղթահարելու համար առաջ նշաւակ դարձուցին քահանայական խնդիրը։ Այդ անձերն են Տիար Սիմոն Էֆէնտի Բէնեւեան եւ Տիար Ղուկաս աղա Պապաեան. իրարու դէմ ունեցած անձնական կիրքին յագուրդ տալու Տաճատ քահանայական խնդիրը եւ ժողովուրդեան իրարանցում իրենց գործիք ըրեցին եւ կընեն. ապա թէ ոչ այդ անձնական հաշիւ չը լինէր Ղեւոնդ քահանան այժմ ի վեհ ինկած, եւ նրա տեղը Արժ. Տէր Տաճատ քահանայ Դերձակեան կայնած էր, որ գիտակ էր ի բարձր կոչման։

Դիտող Ոմն

ՄԽԻԹԱՐԵԱՆՆԵՐՈՒ ՅՈԲԵԼԵԱՆԸ ԵՒ ԻՏԱԼԱՑԻՔ

Հայկական այդ նշանաւոր յոբելեանին ներկայ եղեր են և երեք իտալացիներ. մին «Իլլիւսթրասիոն Իթալիանա» հանդէսին խմբագիրը, միւսը աշտակալ երեսփոխան Գալլի և երրորդը սպայ մը, Նինօ Մանտօվանի որ Մխիթարեանց դպրոցի մէջ սորված է։

Այդ երեք իտալացիներն ալ ճառեր արտասանած են, որոնց մին սպան՝ հայերէն լեզուով։

Այդ ճառերու կարեւոր մասերը մենք հոս պիտի դնենք մեր ընթերցողներուն պարզելու համար թէ ինչպէս կը վերաբերի դէպի մեզ իտալացին շնորհիւ Մխիթարեան միաբանութեան,

Խմբագիրը մօտաւորապէս հետեւեալն ըսած է. Սպէնսէր ըսած է. «գիտութիւնը միանգամայն բարոյական է». եւ դուք էք այս ճշմարտութեան կենդանի գրաւականները։ Իտալացի մըն ալ ըսած է. «գիտութիւնը միանգամայն ազատութիւն է» դուք որ գիտութեան բարձրագոյն կատարները հասեր էք, մի վհատիք, սփռեցէք այդ ձեր ազգին մէջ և պիտի գտնէք ազատութիւն. զինուած էք դուք ամենազօրաւոր զէնքով, որի դէմ թոյլ են ուրբերը՝ անզօր են [illegible]ները, և անով պիտի կանգնէք ձեր հայրենեաց բարձունքներուն վրայ յաղթական դրօշը, որին փուլթով ծածանելը կը մաղթեմ»։

Իսկ Պ. Գալլի հետեւեալը ըսեր է. «այսօր մեծարգոյ հայեր, անկեղծ մաղթանքս յայտնելով կը յայտնեմ և այն որ միանգամայն կը ցաւիմ Վենետիկցի ըլլալուս համար և թէ կը պարծենամ։ Այս երկու օրուան մէջ ստացուած բազմաթիւ նամակները և հեռա-

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱՅԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՈՒՄԸ

Կիրակի, սեպտեմբերի 23-ին, գեղեցիկ, տաք, ամառնային օր, երկինքը ժպտում է, ինչպէս այն օրը, երբ ինը տարի սրանից առաջ մենք թաղում էինք Գամառ-Քաթիպային։ Սուրբ Խաչի բակը գեղեցիկ զարդարված է դրօշակներով և կանաչ դալարէ կամարներով։ Կամարները բարձրանում են և արձանի վրա։ Դեռ թաղումից մնացած 18 պսակները կախւած են կամարներից։ Արձանի պատուանդանի տակը երեք աստիճաններ են, ցածինը-մանրանկար, մնացած երկուսը տաշած սեւ լաբրադորաքարեր։ Երկու գեղեցիկ կարմիր հատաքարեր, որոնց վրա դարձեալ մի փոքր սեւ լաբրադորաքար և այդ լաբրադորաքարի վրա ամրացած կիսարձանը։ Ընդամենը արձանը ունի բարձրութիւն 5 արշին և ծանրութիւն 500 փութ։ Արձանը (*) շքեղ է և լաւ տպաւորութիւն է թողնում ամէն կողմից և մեծ պատիւ է բերում մեր երիտասարդ քանդակագործ Անդրէաս Տէր-Մարուքեանին, որի տաղանդը, շնորհքը և ճաշակը աչքի են ընկնում իսկոյն, արժանի են մեր ուշադրութեան և կարօտ են գնահատութեան։

Վերեւը փորագրված է 8 XI 1830 / 22 VIII 1892

Եւ յետոյ հետեւեալը.

Մի՛ կարծէք որ ես սին փառքի համար
Իմ հառաչանքով լցրի.. աշխարհ
Այս հէգ տմբուկի ծափին ու գովքին
Կարօտ չէր բնաւ իմ հպարտ հոգին,
Այո՛, իմ քնարի տխուր ձայները
Ճնշեցին հայի հոգու լարերը,
Արիւն էլ ազնիւ սրտէ քամեցին,
Կարեկցի աչքէ քունը փախուցին։
Ստորին քարի վրա փորագրված է
Մեղքսիր քեզի ու քու զաւակիդ,
Պահպանէ հաւատ, լուզուն խեղճ
ազգիդ,
Ու անկէ էտև չի ցաւիլ հոգիս,
Թէ որ սուն ինիչի սիրես, տախս.
Եփ որ չատ տա, ի կանցնեն և կերթան
Ու օսկոններուս իղն ալ չէ մնալու,
Հա՛յ վախ, խեղճ հայեր, ձեր որդիք կուզան

Պայերուն մեղքը Փօղխ վրա լալու։
Երկրորդ Երեսում գրված են հետեւեալ երկու տողերը։

Բանաստեղծ, ի՛նչ փոյթ, որ քու
սրտի մէջ կան վշտեր հազար,
Չէ՞ որ քու վշտից պիտ ծագի պատգամ քու ազգի համար։

Ետեւի մասում փորագրված է՝ Գամառ Քաթիպայ. կարծես երեք քարերի վրա, իրարից բաժանած, ականակիւթիւն գրականական ընկերութեան Գ. Քանանեանի, Մ. Թիմուրեանի և Ռ. Պատկանեանի։ Ստորին լաբրադորաքարի վրա գրված է Բնար մանկութեան վրայ գրած Ռափայէլ Պատկանեան։ Պակինները պատրաստ չեն։ Աստիճանների մօտ փռված է կարմիր մահուդ, որի վրայ դրած են տասներկու պսակներ՝ շքեղ արծաթեայ-Մոսկվայի հասարակութիւնից, մետաղից և ծաղիկներից հետեւեալ հաստատութիւններից. —«Մշակ»ի խմբագրութիւնից, Նոր-Նախիջեւանի քաղաքային վարչութիւնից, արհեստագործուհուաց Գոգոյեան, թեմական

(*) Կիսարձանը ձուլված է Մոսկվայում եղբ. Կրինեվսկու ձուլարանում իսկ պատուանդանը պատրաստել է Ռոստովում պ. Մէնցինէ մեծ շնորհքով։

գիրները որ կարդացուեցան, անսուտ վկաներ են ձեր դէպի ձեր ազգը մատուցած երախտիքների և իրենց փոխադարձ երախտագիտութեան, կը յաւելմ որ Վենետիկցի լինելովս հայ չիմ եւ զանոնք հասկնալ չեմ կրնար։ Սակայն բան մը որ ամէն մարդ կը հասկնայ առ սրտի զգացումն է...

«Դուք, կրօնքի և գիտութեան ախոյեաններ մինչ և Փոքր Ասիայի հեռաւոր անկիւնները կը տանիք Վենետիկի անունը և Իտալիայի փառքը... բան մը միմիայն կը խնդրեմ ձենէ, երբ ձեր նուիրական հայրենիքը երթաք, երբ առաքելական քայլերով բարձրանաք անոր սարերու վրայ, շրջիք անոր ծաղկազարդ հովիտներու մէջ, ըսէք անոր գետերուն, ծածիկներուն, որ աշխարհիս մէջ կայ քաղաք մը որ կրած է ձեզ նման սով, հիւանդութիւն և թշնամու սուրը, որ հոն կայրի ժողովուրդ մը որ Աստուծոյ օգնութեամբ և իր արիութեամբ կրցաւ իր գլուխը գերութեան լուծի տակէն բարձրացնել, և որ այժմ ազատ կողջունէ զձեզ, իր եղբայրներուն և կը մաղթէ ձեզ նոյն ազատութիւնը»...

Իսկ սպան հետեւեալն ըսած է հայերէն լեզուով. «Իբրեւ Նախկին աշակերտ Մուրատ Ռափայէլեան դպրոցի, վերապատուեալ Մխիթարեան հարց ձեռքին տակ Իտալիոյ մէջ դաստիարակուած, իբր մէկ հատիկ օտարազգին, պարտականութիւն կզգամ այսօր հայոց եւ իտալացւոց մեծ տօնին առթիւ, ըմպել հոս այս բաժակը՝ երախտագէտ հիացումով լեցված։

. . . .

Կեցցէք ուրեմն, Գեր. Աբբահայր, կեցցեն իմ դաստիարակներս, որոնց գրեթէ ամբողջ այս սեղանին շուրջը կը տեսնեմ, կեցցէ հայ ազգը, կեցցեն Մխիթարեան հայրերը, Արեւմուտքի կաղաքակրթութեան քարոզիչները, և նոյնպէս կեցցէ Սավոյոյ դիւցազնական ցեղը և իմ երիտասարդ հայասէր արքան»։

***

ԱՐԻՒՆՈՏ ՍԱՎԱՆ

Շղթայակապ մթնդած նա բերվեց սաստ ժանտարմներով, հազարապետի ու գայմագամի առաջնորդութեամբ։ Շղթաներով ձեռքերը ամուր սեղմված էին, իսկ վիզը փաթաթված էր փոկերով։ Սարսափելի կոմիտաճին անկարող էր փախչիլ։ Կատաղի ժանդարմները սքանչանում էին այդ տեսարանով մտրակով ծեծում էին, Սավէի գլուխը և հրացանի կոթերով նրա ոսկրները փշրում։ Կիները, երախաները դողահար դիտում էին այդ սարսափելի տեսարանը, ձեռքերը խաչում և լալիս ինչպէս մեռած մարդի վրա։

Երկաթները չռնդում էին և այդ լացը աւելի չարագուշակ դարձնում։

Իսկապէս Սավէն մեռած էր. այդ խեղճ գիւղացին մահու և կենաց որոշումը տուել էր։ Իրեն վիճակվեց մահը, սակայն ոչ այնպէս, ինչպիսին ինքն էր ցանկանում։

Սավէի համար մահը այնքան էլ սարսափելի չէր, որովհետեւ ինքը վաղուց արդէն մեռած էր։ Մակեդոնիայի ստրուկը իր ծննդից առաջ արդէն մեռած է. Նրա համար չը կայ ազատութիւն, չըկայ երջանկութիւն, չըկայ արեւօր. նա իրեն չէ պատկանում, ուրիշն է կառավարում թէ իրեն թէ նրա պատիւը և թէ նրա ստացւածքը։

Թուրքը նրա տէրն է, նա է Մակեդոնացի ստրուկի ճակատագրական իշխողը. Ղուրանի մէջ գրված է թէ՝ ամէն մի ուղղափառ իրաւունք ունի քրիստոնեաներին իրեն գերի անել։

Այդ դաժան արտօնութիւնը որ Թուրքին կտակել է դեռ Մահմէտը, այսօր լիովին գործադրվում է Մակեդոնացի բուլգարի վերաբերմամբ։

. . .

Սավէն էլ չը կարողացաւ դիմանալ, ճարեց մի հրացան և իր ճակատին գրեց այս սարսափելի խօսքերը. «Մահ կամ Ազատութիւն»։

Այդպէս նա սպասում էր օրհասական ժամին։ Բայց անիծեալ մատնիչը դարեւոր թշնամիներին բերեց Սավէի տունը, որոնք այնտեղ գտան հրացանը, կասկած ստրուկի ձեռքում իրենց համար սարսափելի զէնքը։

Եւ Սավէն արտասունք թափեց իր հաւատարիմ ընկերուհուց բաժանվելու համար, որին սիրում էր իր աչքերի պէս։ Ընկերուհու փոխարէն ծանր շղթաները ընկան նրա ուսերի վրա, անտառի և ազատութեան փոխարէն մութ զնդանը իր գիրկը բացեց Սավէի համար։ Այո, ընկերուհի, դու աներեւոյթացար։

. . .

Մռայլ գիշերը տիրում է թրքական զնդանի մէջ։ Սավէն ծեծված, փշրված ոսկրներով, զզզված մսերով թափում է արիւնոտ արցունք։ Ինքը ամբողջովին արեան մէջ է։ Շղթաները արդէն արիւնից ժանգոտելեն և նա տեսնում է խաւարի մէջ որ իրեն մօտենում են հինգ ստուերներ։ Սավէն չէ կարողանում ճանաչել նրանց։ Դրանք իր երախաներն են, որոնց սովը և սարսափը ուրւականների է վերածել։ Նրանք ձեռքերը մեկնում են Սավէին և օգնութիւն խնդրում։ Բայց արիւնը թափվում է Սավէից և ցուրտ կաթիլներով ընկնում մանկանց թաթիկների վրայ։

Մանուկներ, ձեր հայրը արդէն մեռել է դուք էլ մեռած էք. ոչ Աստուած, ոչ մարդիկ դըրանք ձեր եղբայրները և քոյրերն են, վայրի գազանի ձեռքը ընկած։ Միթէ ոչ ոք չի խղճում։

Ոչ ոք օգնել չի ուզում։

—Չըկայ օգնութիւն Մակեդոնիայից պատասխանում է արիւնոտ Սավէն, չըկայ պատասխանում են և նրա որբերը, ու կրկին արցունք, կրկին սուգ։

(ՐԷՖՕՐՄԻ)

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԸ

Թանի Պոլսոյ Թղթակիցը հոկտեմբեր 2ին կը հաղորդէ որ Մուշէն եկած տեղեկութիւններու համաձայն Պիթլիսի վալիին, Էրզրումի զօրաց հրամանատարին Պիթլիսի ընդհանուր դատախազին, Ռուսաց Վանայ հիւպատոսին և գօքերուն գալէն յետոյ այլեւս խռովութիւններ չեն պատահած, զօրքերը ցրուած են Մուշի շըրջակաները և այդպիսով կոտորածն ու թալանը դադրած է։

Գլխաւոր դէպքը տեղի ունեցած է Մոկունքի մէջ, ուր, Շէրիֆ աղայի դիակը գտնուելուն պէս 50ի չափ հայեր ձերբակալուեցան։ Հիմա այդ քուրդը սպաննողը յայտնի է. Եսմէր անունով հայ օրիորդ մը, զոր Շէրիֆ աղան բռնաբարած էր։

Այդ նոր Ծալիլլան դաշոյնահար ըրեր է զինքը բռնաբարողը և իր եղբայրներուն հետ միասին դիակը տարեր դաշտը նետեր է։

Այսպէսով, սպաննուած քուրտի մը համար 50 հայ բանտարկեր են, 7 սպաններ, գիւղ մը թալներ և հունձքերն ալ հրդեհեր են։

Սակայն յուլիսէն սկսուած թալաններու սպաննութիւններու, բռնաբարութիւններու համար մինչեւ օրս ոչ քուրտ մը և ոչ ալ

դպրոցներից, եկեղեցական հոգաբարձութիւնից, թատերասիրաց ընկերութիւնից, հայուհեաց ընկերութիւնից, բարեգործական ընկերութիւնից Մոսկվայի ուսանողներից, Նոր-Նախիջեւանի կանանցից և օրիորդներից։ Պատարագիչն է վանահայր է։ Վահան վարդապետը. Ներկայ են յաջորդ Մուշէ վարդապետ, քաղաքի բոլոր աչքի ընկնող քահանաները և եղեցիկ խումբը. Հոգեհանգիստը չը վերջացած, արձանի մօտ, առաջ խօսում է Դր. Զալխուշեանը։ Ահա նա ինչ ասեց.

«Որովհետեւ սկիզբից մինչեւ այսօր յանձնաժողով եղած չէ և մենք ենք գործին գլուխ կանգնած, մեր վրա ծանրանում է պարզ տալ հաշիւ, մի կարծէք,—նիւթական, ոչ. նիւթական հաշիւ մենք տուել ենք եւ դեռ պիտի տանք մեր մամուլի միջոցով. ես խօսում եմ բարոյական հաշւի մասին։

Դամառ-Բաթիպան թողել է հետեւեալ կտակը.

Կեանքիս մէջ մի հատ սին փառք
ունեցայ,
Սուրբ Էջմիածնում Թաղվել ցանկացայ
Սիրելիս իմ ազգ թէ Աստուած սիրես,
Այս իմ մի հատիկ իղձըս կատարես։

«Անարգելով այդ կամքի առաջ մենք դիմեցինք ուր հարկն էր, գրով, անձամբ, բայց անկարող եղանք մեծ բանաստեղծի մի հատ վերջին իղձը կատարել... այնուամենայնիւ, թէ թաղման ժամանակ, թէ այժմ արձանը կանգնելիս, մենք աչքի առաջ ունեցել ենք այդ հանգամանքը և եթէ մի օր առացվի թոյլտուութիւն, մարմինը կարելի կը լինի տեղափոխել և կտակը կատարել... Մեզ համար մի տեսակ մխիթարութիւն է, որ մենք ժամանակին կարողացանք թաղել նրան այստեղ։ Չէ՞ որ Ս. Խաչն էլ Ս. Էջմիածնի թէեւ հեռացած, բայց և անբաժանելի կտորն է. չէ՞ որ մեծ բանաստեղծի կողքին կանգնած է մեծ հրապարակախօսը։ Եւ մտնելով վանքի տաճարը և իջնելով եկեղեցու սանդուղքներից, մենք միշտ պիտի տեսնենք երկուսին, կողք կողքի կանգնած, տեսնենք և ճանաչենք մէկի քնարի հանճարը, միւսի սուր գրիչը, մէկի «Հիմի էլ լռենք»ը, միւսի «Հիմի է՞լ խօսենք»ը, մէկի «Հայկ ու Լեւոն՝ն մոռանանք, եղբարք»ը միւսի «Հայկ ու Լեւոնին յիշենք, եղբարք»...

«Հասարակութեան և մամուլի առաջ մենք պատասխանատու ենք ամէն մի տողի, ամէն մի խօսքի համար, որ փորագրված են արձանի վրա։ Մենք ցանկացել ենք, որ բանաստեղծը ինքը խօսէ իր արձանից, ինչ էր, ինչո՞ւ էր նա երգում, ի՞նչ էր նրա վիճակը և ի՞նչ էր նա սպասում մեզանից... կարող չէր սին փառքի մեծ բանաստեղծը և արհամարում էր մեր գովքը և ծափը։ Եւ սակայն նա երգում էր, որովհետեւ աստուածային կրակը վառված էր նրա կրծքի մէջ և այրում էր։ Իսկապէս երգ էլ չէր նրա երգածը, այլ հառաչանք, ծանր հառաչանք հայ աշխարհի։ Բամելով «ազնիւ սրտէ արիւնը և փոխցնելով կարիճի աչքէ քունը», հառաչանքը դառնում է պատգամ մեր ազգի համար։ Այդ պատգամն է— պահպանէ հաւատդ և լեզուդ։ Բայց ափսո՜ս, դառն էր բանաստեղծի վիճակը. Պատգամը ծագում էր նրա հազար ու հազար վէրքերից և վէրքերը ծանր էին և մաշում էին, քանդում նրա կուրծքը. փոխանակ սիրոյ և յարգանքի, տեսնելով շուրջը ատելութիւն և դառն անտարբերութիւն, նրազում է որ կը գայ նրա համար էլ վերջապէս մի օր, մի պայծառ, որ որ նրա ոսկորների հետքն էլ մնացած չի լինի, հայերը պիտի վազեն գանչքեն նրա գերեզմանի վրա, «պատերուն մեղքը փողի վրայ լալու»։

(Շարունակելի)

թուրք մը չէ ձերբակալուեր։ Մօկունքի մէջ հարցաքննիչներու դեր կատարողները ամէն ճիգեր կը թափեն համոզելու որ քուրտերէն սպաննուած հայերը հայերու ձեռքով սպաննուած են։ Կը հալածուին նաեւ այն հայերը որոնք Եըլտըզի միջամտութիւնը խնդրած էին։

Բասէի գիւղերէն մէյ մէջ 30 զինուորներ հայ աղջիկ մը առեւանգեր են իրենց հրամանատարին հրամանով, Էրզրումի նահանգապետ Ռէուֆ փաշան իր հրաժարուելէն քանի մը օր առաջ աղջիկը կաղատէ և 12 զինուոր կը բանտարկէ։ Հաւանական կը թուի որ Ռէուֆ փաշան հրաժարեցուցին այդ արդար գործին համար։

Սասունէն դեռ եւս ոչ մի նոր լուր կայ։

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Սեպտեմբեր 23ին Նոր Նախիջեւանի Ս. Խաչ վանքի մէջ կատարուեր է Գամառ Քաթիպայի արձանի բացումը համեստ հանդէսով մը։

Նոյն օրը հեգեհանգիստ կատարուեր է և անմոռանալի Միքայէլ Նալպանդետնի գերեզմանի վրայ, որ նոյնպէս այդ վանքին գաւթին մէջ թաղուած է. հանդէսին նկարագրութիւնը մեր ընթերցողները թո՛ղ կարդան Շարժումի բանասիրականին մէջ։

Խապայեան Եպիսկոպոս Ատանայէ պատրիարքարանի գրած է որ արդէն իր պաշտօնին դորձադրութեան ձեռնարկեր է։

— Ամենայն Հայոց կաթողիկոսը Տփղիսի մէջ Վրաստանի ռուսական կայսերութեան միանալու հարիւրամեա յոբելեանի համար կատարուած հանդէսներու ժամանակ հոն գտնուեր է։

Փոխադարձ այցելութիւններ տեղի ունեցած են կայսեր ներկայացուցչի դուքս Միխայէլ Նօքօլաէվիչ և կաթողիկոսին միջև։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Պրուսայի նահանգէ մինչեւ օրս 42000 լիրա զրկուեր է՝ Հիճազի երկաթուղւոյ շինութեան ծախուց համար։

— Սուլթանի հրամանով 8 պելճիգացի ճարտար երկրաչափներ պիտի ըհաւիրուին այդ երկաթուղիին շինութեան գործը փութացներու համար։

Իմացուելով որ մահմետական տղայք չի նայելով Սուլթանի արգիլումին կը շարունակեն օտար դպրոցներ երթալ, որոշուեր է այդ վարժարաններու ցուցակը կազմել և պէտք եղած կարգադրութիւնները ընել։

— Պոլսոյ ռուսական ծովային կցորդն գաղտնի յանձնարարութեամբ մը Կրէտէ մեկնած է։

— Սուլթան կրկին դիմած է Զինովիէվի միջամտելու Ֆրանս թրքական վէճը կարգադրելու համար։ Զինովիէվ ոչ մէկ պատասխան տուած է։

— Երիտասարդ Թուրքերը մը-տադիր են իրենց գործունէութեան կեդրոնը Լօնտրա տեղափոխել։

— Հոկտ. 6ին Պոլսէն կը հեռագրեն թէ՝ Մուշի գաւառի հայերէն երկու հազար հոգի՝ խընդրագիր տուեր են ռուսական Վանայ հիւպատոսին զիրենք ռուսական եկեղեցւոյ գիրկը ընդունելու համար, որպէս զի աղատուին իրենց տանջանքներէն։

— Պոլսէն Պուլկար թերթերուն կը հաղորդեն թէ՝ Զինովիէֆ շուտով պիտի երթայ Բեթերսպուրկ այդ մեկնումին մեծ նշանակութիւն կը տրուի, որովհետեւ կսուի թէ կապ ունի այն դիրքին հետ զոր Ռուսիա այսուհետեւ պիտի բռնէ Մակեդոնիոյ և Հայաստանի մէջ։

Ռուս դեսպանին վերջերս ըրած կտրուկ քայլերը այդ երկիրներու կացութեան մասին գուշակել կուտան թէ Ռուսիա այսուհետեւ գործօն դեր մը պիտի կատարէ։

Զարմանալի այն է որ այստեղ լացի ռուս դեսպանէն ոչ մէկ դեսպան մը խօսք մը կարտասանէ ի պաշտպանութեան տանջուող քրիստոնեաներու։

Ուրեմն եթէ սպասելիք մը ունինք ատ ալ Ռուսիայէն պիտի ըլլայ։ Միւս ամէն պետութիւնները միայն իրենց շահերու վրայ կը հոգան։

Ֆրանսան միայն Լօրանտոի և Թուբինի ստակներուն մասին կը մտածէ և այդ դրամական կռիւէն օգտուելով կուզէ Թունուսի վրայ իր հովանաւորութիւնը ճանչցնել տալ։

ՌՈՒՍԻԱ

Ռուսական ներքին նահանգներու մէջ ժողովուրդը սովի պատճառով խռովութիւններ հտներ է և ժողովուրդեան միջև ընդհարումներ տեղի ունեցեր են։

— Պատերազմական նախարարը հրամայած է զօրք համախմբել Աֆղանիստանի սահմանին քովերը, որպէսզի այնտեղ խառնակութիւններ պատահած միջոցին պատրաստ ըլլան գործելու։

Թայմզի Բէքինի թղթակիցը կը հեռագրէ թէ Ռուսական դեսպանը և Լիհունկ Զանկ գաղտնի բանակցութիւններու մէջ են Մանչուրիոյ վերաբերմամբ։ Գաղտնիքը շատ ամուր կերպով կը պահուի։

— Զինական կայսեր կողմէ պատուիրակութիւն մը պիտի երթայ Բեթերսպուրկ Մանչուրիան ետ պահանջելու համար։

ՖՐԱՆՍԱ

Զարի մեկնելէն յետոյ Ֆրանսական քանի մը թերթեր, ըսկսած են քննադատել ռուս ֆըրանսական դաշնակցութիւնը եւ ապացուցանել որ Ֆրանսա այդ դաշնակցութենէն օգուտ մը չունի, Ռուսիա Ֆրանսիոյ շահերուն պաշտպան չի հանդիսանար, ընդհակառակը միշտ աշխատած է զայն ստորնացնել և այդ դաշնակցութենէն միայն ինքն է որ կօգտուի։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Ռուսական թերթ մը կը հերքէ Պարսկաստանի մէջ գոյութիւն ունեցող խռովութիւններու մասին տարածուած լուրը։

ՊՈՒԼԿԱՐԻԱ

Լրացուցիչ ընտրութիւնները մեծ կարգապահութեամբ տեղի ունեցան։

Շահած են հետեւեալ կուսակցութիւնները։

Ազգային— 9
Ցանքովիստ—10
Տէմոկրատ—6
Սթամպոլիստ—3

ԹՐԱՆՍՎԱԼ

Քաբի երկիրը ապստամբ վիճակի մէջ է։ Պոթա զօրավարը կրկին խուսափեր է անգլիացիներէն։ Անգլիացիներու վիճակը հետզհետէ բոլորովին աննախանձելի կը դառնայ։

Այս պատերազմը անվերջ կերեւի։

—o—

ՃԱԲՈՆ

Եւրոպական քանի մը թերթեր Ռուսիոյ եւ Ճաբոնի միջեւ պատերազմը անխուսափելի կը համարեն, եւ կըսեն որ այդ պատերազմը եթէ տեղի ունենայ, ամենանարսափելի պատերազմներէն մին պիտի ըլլայ։

ԹԱՏՐՈՆ ՍԱՆԹՐԱԼ

—(]]—

„ՎԷՍԷԼԻՕ“

Հայ Դեր. խումբը առաջնորդութեամբ Ա. Պէնլեանի վաղը հինգշաբթի գիշեր մեծաւ պատրաստութեամբ պիտի ներկայացնէ՝

ԲԺԻՇԿ ՈՃՐԱԳՈՐԾ

մէլոտրամ 5 արար
2 պատկերով

ԼՈՅՍ ՏՍԱԻ

—o—

Ց. Կ. ՊՕՆՃՈՒՔԵԱՆԻ
Նոր Ընթերցարան (պատկերազարդ)
Առաջին տարի
(Երկրորդ տպագրութիւն բարեփոխուած)
Դին 70 Սնթ.
Կը ծախուի Վառնայ Մ. Դալբակճեանի քով։

ԵՒՐՈՊԱՅԻ ՀԱՅ ՈՒՍ. ՄԻՈՒԹԻՒՆ

Եւրոպայի Հայ. Ուս. Միութեան նամակ ուղարկելու եւ առհասարակ ամէն տեսակ դիմում ընելու համար պէտք է դիմել հետեւեալ հասցէով

Ինֆիօն տէ Զէդիւտիան Աւտ.
Լէօոռդ տրիւ տը Լէֆօլ տը Շիւրի 2

Սուիս Ժընէվ
Կարգադիր Ցանձնաժողով

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ „ՇԱՐԺՈՒՄ“Ի

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, համակագլուխ, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ։

Գիները յոյժ դիւրամատչելի։

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշդութեամբ և փութով կը կատարուին։

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԻ

Отговорникъ:
Мурадъ-Ераносянъ

Печ. Взаимность“ — Варна